ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-698-28.07.2020-ՏՏԳԲ-011/0) վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկների

Առաջարկության հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.«***Հոդված 1.*** «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-203-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել նոր՝ 2.1-ին հոդվածով. «Հոդված 2.1. Սահմանամերձ համայնքներում դպրոցական դասագրքերը տրամադրվում են փոխհատուցմամբ: Փոխհատուցման տրամադրման չափորոշիչներն ու կարգը	Ընդունվել է:	Ընդունվել է:

		սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:		
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Ադրբեջանի Հանրապետության տարածքից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների հետեւանքով օթևանին հասցված այն նյութական վնասները, որոնք չեն հանգեցրել սույն հոդվածի առաջին պարբերությամբ նախատեսված օթևանից զրկվելու դեպքերին, ինչպես նաև վերոնշյալ գործողությունների հետևանքով գյուղատնտեսական կենդանիներին հասցված նյութական վնասները ենթակա են փոխհատուցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և ժամկետներում:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներ	Նախագծի 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածների համարակալումներ փոխել՝ համապատասխանաբար դարձնելով 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածում «հաշմանդամության» բառից հետո ավելացնել «հաշմանդամ երեխայի կարգավիճակ» բառերը, «հատուցում» բառը փոխարինել «աջակցություն» բառով: Նույն	Ընդունվել է:	Ընդունվել է:

		հոդվածում ավելացնել նաև «Փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով և ժամկետներում:» նախադասությունը:		
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածը լրացնել նոր պարբերությամբ. «Սույն օրենքի համաձայն՝ ընտանիքի անդամներ են համարվում 1) ամուսինը. 2) զավակը (զավակները). 3) ծնողը (ծնողները). 4) հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ 18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան առկա ցերեկային ուսուցմամբ սովորող ուսանող քույրը և եղբայրը, ինչպես նաև զոհված քաղաքացու խնամքի տակ գտնված 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև 18 տարին լրանալը: Ընդ որում, քույրը և եղբայրը հատուցման իրավունքից կարող են օգտվել, եթե նրանց ծնողները կամ միակ ծնողը մահացած են կամ ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության առնվազն երրորդ աստիճանի սահմանափակում: Սույն հոդվածի 2-րդ պարբերությունում նշված	Ընդունվել է:	Ընդունվել է:

		անձանց բացակայության դեպքում հատուցման իրավունքից կարող է օգտվել նաև այլ անձ, եթե դատական կարգով հաստատվել է, որ՝ 1)հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ անձը եղել է զոհված քաղաքացու խնամքի տակ և ունեցել է հաշմանդամության կամ աշխատանքային կենսաթոշակի իրավունք. 2)խնամել է զոհված քաղաքացուն մինչև նրա 18 տարին լրանալը:»:		
ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մաս	Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասում «օրենքի» բառից հետո ավելացնել «1-ին» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է: